

ԱՅՈՒՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԾՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ա. ՅՏԱՐ ԱՂԳԵՐԻ ՄԻՋ

Նախ քան հայ աշուղի մասին խօսելը, կարևոր է յիշել թէ օտար ազգերի մէջ էլ եղԵլ են հասարակական երաժիշտ-երգիչներ, ժողովրդի խաւերի մէջ շրջող քարոզիչ-բանաստեղծներ—մեր մտքով աշուղներ: Համաշխարհային պատմական կեանքում այդ կարգի երգիչների հետ ծանօթանալուց յետոյ, համեմատական հայեացքով մեզ աւելի հեշտ կը լինի հանաջել մեր աշուղին և հասկանալ նրա նշանակութիւնը:

§ 2. Յունաց մէջ. Հին Յունաստանում, յայտնի անուն վայելող բանաստեղծ-երաժիշտները՝ հասարակական երգիչները—*ս ա պ ս ո գ ն ե ր ը*՝ քնարները ձեռքերին ման էին գալիս մեծ քաղաքների փողոցներում և հրապարակներում, նուազում և երգում էին թէ անցեալ և թէ իրենց ժամանակակից նշանաւոր գործերն ու զէպքերը, անմահացնելով օրուայ հերոսներին: Արքունի շքեղաշուք ապարանքներից սկսած մինչև շինականի աղքատ խրճիթը ազատ ելումուտ ունէին նրանք, քաջ ծանօթ էին ժողովրդի կեանքի, բարք ու վարքին, գիտէին նրա պէտքերն ու ցաւերը, ներկայ էին լինում ամեն մի բազմամարդ տեղ, լինէր այն խրճիշտը թէ յուղարկաւորութիւն, տօնական հանգէս թէ պատերազմ:

Որքան էլ պատմական հնագոյն զէպքերն ու անձինք առասպելախառն բնաւորութիւն ունենան, այնուամենայնիւ մինչև մեր ժամանակներն հասած երգերից դժուար չէ իմանալ թէ մզ կարող է համարուել համաշխարհային աչքդուժեան նահապետը: Այդ պատիւն անշուշտ տրուելու է Յունաստանում Քրիստոսից դուրս և չորս դար առաջ ապրող Որփէոսին: Որփէոսի մասին շատ առասպելական աւանդութիւններ կան, որոնք, սակայն, ցոյց են տալիս նրա բանաստեղծութեան և քնարի հանճարեղ ոյժը:

Նրա մեծնելուց յետոյ քնարը ձգեցին Հերրոս գետը—ստում է աւանդութիւնը—յետոյ ալիքները դուրս ձգեցին Լիւրոս կղզին՝ որը և դարձաւ բանաստեղծների հայրենիքը և ուխտատեղին:

Կէս-առասպելական, կէս-իրական Որփէտոյց յետոյ, իսկական մեծ աշուղը եղաւ մեծ քերթողահայրը՝ Հոմերոս (950): Հանճարաւոր բանաստեղծը եղաւ ժողովրդի համար աստուածների թարգմանը և իւր նուագով հմայեց ու սքանչացրեց իւր ժամանակակից հասարակութեան: Հոմերոս կոյր երգիչը քնարը ձեռքին քաղաքից-քաղաք, գիւղից-գիւղ անցնելով ոտի տակ էր տալիս ամբողջ Յունաստանը, միշտ իւր յետնից քաշ տալով ուկնդիրների մի ամբողջային բազմութիւն: Հելլենի աշքում բանաստեղծութիւնը երկնային ծագում ունէր, երգիչը իւր քնարով աստուածային պատգամախօս էր, նա հաւատացած էր, որ աշուղը երգում է այն, ինչ որ աստուածներն են նրան ներշնչում: Ողիտականի մէջ Տելեմաքն ստում է Մենելոպին. «Եւ ի՞նչպէս ուզում ես արգելիլ երգչին երգել այն, ինչ որ նրա սիրտն է թելադրում, մեղաւորը նա չէ, այլ Արամազդը, որ ՚ի վերուստ ուղարկում է նրան բանաստեղծական շնորհ իւր կամքի համաձայն» (գլ. III, 342):

Հոմերոսի նման աշխարհահռչակ երգչի մասին երկարաբանելու հարկ չը կայ, իհարկէ, յիշենք միայն այս, որ նրա զրոյթանգակ երգեցողութիւնքը ուրիշ բան չեն—ինչպէս ստում է մի հմուտ զբաղէտ—եթէ ոչ առաքինութեան զովեստ և մուլթեան պարտաւ: Ահա այս կարճ որոշումը և դարձաւ նշանաբան բոլոր ազգերի աշուղների համար—առույթ/նութեան զովեստ եւ մուլթեան պարսաւ.—այս նշանը տուեց աշուղների մեծ պատիւարքը— Հոմերոս:

Որքան Հոմերոս մեծ է վիպական բանաստեղծութեան մէջ, այնքան աւելի մեծ է Պինդարոս քնարականի մէջ: Հին Յունաստանի այս հռչակաւոր երաժիշտ-բանաստեղծը Քրիստոսից վեց դար առաջ քնարական բանահիւսութիւնը մշակեց, այնպէս որ նրա անունը տարածուեց ամբողջ հնադարեան քաղաքակիրթ աշխարհը: Պինդար Յունաստանի բոլոր քաղաքները շրջեց նուազելով ու երգելով ու ամեն տեղ մեծ պատուի ու յարգանքի արժանացաւ: Աթենացիք նրան կոչեցին պոստսենոս—համարակաց հիւր, չը տեսնուած մեծարանքներ տուին այդ մեծ աշուղին, ճիւղ հակապատկերը մեր մեծ աշուղի, որ խալկոսի նօջար լինելով՝ կեանքում մի էական խրախուսանքի շարժանացաւ:

Պինդարոս աշուղական արուեստը ստեղծեց՝ իւր երգերը շարադրելով զանազան ձևերով ու չափերով: Նրա երգերից աւելի յայտնի են՝ պարթենեան կամ կուսական (սիրոյ երգեր), ողբեր-

զական (էլեկտրա), նուազներ (ազօթք, ներբող)։ Ոլիմպիական խաղերի ժամանակ Պինդարոս քաջալերում, գովում ու փառաւորում էր յազթանակը տանողներին և որ աւելի մեզ համար շահեկան է, կրկէսի մէջ ինքն էլ մրցութեան էր դուրս գալիս անուանի աշուղների հետ։ Շատ քիչ մարդ էր վստահանում նրա դէմ մրցութեանը ելնելու ու անշափ մեծ էր նրա համբաւը։ Պինդարոսի հետ մրցութեան ելնելը, Դիաւալոսի պէս մոմով թևեր կապուցած՝ երկինք ելնել ուղելու պէս բան մըն է—ասում է մի ուրիշ նշանաւոր բանաստեղծ—վասն զի հեղեղ է Պինդարոսի հանճարը, որ սրտամամբ, ուժգնութիւն տաած, ահաւոր շողալմամբ մը լեռններէն գետեր կը թափի. նոր լեզուով մը, նոր հանճարով ու աշխայծով իր երգած գիւցազանցը կամ աստուածոց այնպիսի երկարակեցութիւն մը կուտայ, որուն հարիւրաւոր արձանք և կոթողք բաւական չէինն^{*)}։

Ութսուն տարի ապրեց Պինդարոս ու մեծաւ փառքի ու մեծարանքի մէջ, Սրբ որ Մակեդոնացին հռչակաւոր թէրէ քաղաքը կործանեց, հրամայեց որ Պինդարոսի տունը թողնեն անվտանգ ու անկործան։

§ 3. Հոռոմայեցոց մէջ. Գիտութիւնը, գեղարուեստը որքան որ Յունաստանում տաաջ գնացին, Հոռոմայեցոց մէջ նոյն դրութեանը չը հասան։ Հելլենը 'ի բնէ լուրջ, բնութիւնը սիրող ու հասկացող, գեղեցիկը պաշտող.—հոռոմայեցին զիս, զուարճասէր, տիրելու, նուաճելու ոգով մտուած, «Հաց և զուարճութիւն» աղաղակում էր Հոռոմի ամբոխը և ուրիշ ոչնչով չէր հետաքրքրուած, եթէ չը հաշուենք քանի մի աննշան անունները, որ երևում են հոռոմէական բանաստեղծութեան պատմութեան մէջ, կարող ենք ասել, որ Ալգենիսեան թերակզզին չէ տուել մի այնպիսի խոշոր հասարակական-բանաստեղծ, որին աշուղ համարէինք։ Եթէ եղել են այդպիսիները, նրանց ձայնը խլացել է կրկէսների ու հրապարակների խառնաշփոթ իրարանցումի մէջ, փղբերի, ցուլերի և առիւծների զոռում գոչիւնի ու քրիստոնէութեան նահատակների վայնասունի մէջ, Հոռոմի կեանքը կարօտում էր Վիրգիլիոսների, Հորացիոսների, որ երգէին հայրենիքի տխուր վիճակը։ Մինչ ուրիշ ազգեր տեսակ տեսակ արուեստների և գիտութեանց մասին են մտածում—ասում է Վիրգիլ—քո արուեստը, ո՞վ Հոռոմայեցի, միայն ազգեր ընկճելու և խոնարհեցնելու մէջն է։

Աշուղական բնաւորութիւն ունէին, կարհիլի է ասել, Հոռոմուլի ժամանակներում գոյութիւն ունեցող քրոմական երգերը, որ

*) Զարքանալ.

ընդհանուր անունով կոչուած էին բարձրագոյն եղբայր երգերն: Այդ եղբայրները տանտերու բուրմեր էին, որ ամեն տարի զարնան սկզբներին այգիներով ու դաշտերով հանդիսաւոր անցնելով, երգում էին իրենց հեղինակած երգերը և աստուածներէց առատ հունձք և պաղարերութիւն մաղթում:

§ 4. Հրէաստան. Արեւելի ժողովուրդների մէջ ամենից առաջ նայինք հրէաներին: Երբայական բանաստեղծութիւնն այն մեծ նշանակութիւնն ունի, որ ազգեցութիւն ունեցաւ շատ ազգերի հոգու և մտքի արտայայտութեան վրայ: Աստուածաշունչը, սաղմուտ անբազառ աղբիւր դարձան յետագայի ոչ միայն գրականութեան, այլ և գրագիտութեան ու բարոյագիտութեան: Բայց խօսքը այստեղ բանաստեղծութեան պատմութեան վերայ չէ, իհարկէ, մեր նիւթը վերաբերում է աշուղական երգերին ու քարոզչական մտքերին: Ի՞նչ կը տեսնենք, այն ինչ որ կղել են ուրիշ ազգերի մէջ աշուղները, նոյնը՝ աւելի՛ բարձր ոգևորութեամբ, էքստազով, թունդ կրօնական աշխարհայայտողութեամբ կղել են հրէական Հին ուխտի պատմութեան շրջաններում մինը միւսի յետևից յայտնուող մարգարէները կամ նրանց շաւղով ընթացող շրջիկ քարոզիչները: Բանաստեղծ, երաժիշտ, ժողովրդի մշակ, նրա ամեն խաւի մէջ մտնող ու քարոզող, հասարակութեան միիթարիչ, գրկանքների, փարաւոնական հալածանքների միջոցներին համբերութիւն, սէր, աստուածասիրութիւն երգող էին մարգարէները:

§ 5. Արարիւթ. Անցնելով արեւելեան հեռու ազգերը, կանգ առնենք Արարիայի ու նրա անմիջական կրօնական ազգեցութեան տակ կողմ Պարսկաստանի ու Տանկաստանի վերայ, որոնք և սերտ կապ ունեն հայ աշուղական բանահիւսութեան հետ:

Արարիան իւր բանաստեղծներով գերազանցում է արեւելեան բոլոր ազգերին ի բաց շառած և հրէաներին: Իմաստասիրական—բարոյախօսական բանահիւսութիւնը՝ որ մեր նիւթին է վերաբերում, ծով է Մուհամմէդի հայրենիքում: Դեռ Մարգարէից առաջ Արարիան ունէր իւր անուանի բանաստեղծները, որ զովերգում էին ազգի ներքին կեանքը, նրա հերոսներին և կանանց: Երբ Մէքքայում և այլ նշանաւոր կենտրոններում մեծ տօնավաճառներ էին սարքւում, տեղի էին ունենում աշուղական հրապարակական մրցումներ, բաց երկնքի տակ, հազարաւոր մարդկանց ներկայութեամբ: Յաղթանակը տանողը իւր երգի-համար սատարում էր պարզ և քաղաքի իշխանաւորից: Այդպիսի պարզևի արժանացած երգերը կոչուած էին մօղսա՛նաքաթ (ոսկեայ) կամ մօալլա՛կատ (զարնանային). ոսկեայ ասուած էին նրա համար որ զրուում էին ոսկեայ տառերով մետաքսի վերայ Մէքքայում՝ Քեա-

պայի սրբազան մուսքի վերև կախելու, իսկ զարնանային ասուում էին՝ որովհետև այդ մրցութիւններն ու պարզաբարաշխութիւնները կատարուում էին գարնան սկզբներին: Մասլլակաթներէրց մեր օրերը հասել են եօթը հատ, որոնք խոր զգացմունքով ու բարձր երեակայութեամբ ճոխ լինելով հանդերձ արտայայտոււմ են բուռն սէր դէպի կինը և վրէժխնդրութիւնը: Այդ ո ս կ և ա յ շրջանի նշանաւոր աշուղներն են Նարուհի, Ամա-Շանֆարա, Ուրավա-իրլ-ալ-վարդ, Քեհար-Բէկ-Ջոհաքը. այնուհետև մինչև Մարգարէի օրերը հասան Քարաֆա, Սուխէյր, Անտարա, որ իւր քաջութեան համար կոչուեց Արու-էլֆավարիս, յայնչն՝ «հայր հերտասց», Լերիտ՝ նախ կատաղի հակառակորդ Մուհամէդի, յետոյ ամենաշիրմաւոր հետերդ՝ և Ամրիլկայիս, որին Մարգարէն անուանեց «դժոզքի գրօշակակիր» *):

Մուհամէդից յետոյ արարական բանաստեղծութիւնը աւելի բազմազան կերպարանք է ընդունում և խալիֆների օրով հասնում է ամենաբարգաւաճ դրութեան, մասնաւոր շարունակ—Ռաշիդի օրով (786—809): Սպանիայումն էլ օմայեանները խալիֆների պէս հովանաւորում էին արարական աշուղներին: Այս շրջանի հռչակաւոր երգիչներն եղել են Աբու-Նոփաս, Իբն-Շօրէյա-Աբուլալա, Մէլտանի, Համատանի, Հարերի: Այս նշանաւոր աշուղները գործերը Ը-րդ դարում Աբու-Քամաճ հաւաքեց և կազմեց մի պատկանելի ժողովածու, որ յայտնի է «Համասան» անունով: Համասան տասը հատորից էր բաղկացած՝ հերոսական երգեր, դամբանականներ, բարոյական առակներ, սիրային երգեր, երգիծանք, գովասանական երգեր, նկարագրական, ճանապարհորդական, կատակներ և ծաղրածութիւն կանանց: Բոլոր երգիչների թիւն էր 577-ը, որոնցից 56-ը կանայք էին: «Համասան», արարական բանաստեղծութեան այդ շտեմարանը, լոյս տեսաւ լատինական թարգմանութեամբ անցեալ դարի սկիզբներին «Hatas carmina» 1828. իսկ Ռիւկկեր տուեց այդ երգերից մի քանիսը զերմաներէն տաղաչափական թարգմանութեամբ: (Շտուտտբրո 1846): Այդ ժողովածուին յետոյ միացուեցան այլ աշուղներ, որոնց գործերը սակայն աւելի յայտնի են «Քիթապ ալ աշուղին» անունով, որ և պարունակում է 395 աշուղի կենսագրութիւն:

Բացի այս ամենը Արաբիայում միշտ անպակաս են եղել հին ժամանակներում թափառական աշուղները, բեղուին և զերվիշ բանաստեղծները, որոնց կեանքի նկարագրութիւնը և գործերից հասուածներ յայտնի են «Էլուան» կոչուած գրքերում, որ

*) Шерръ Исг. Лит. I

անցեալ դարում լոյս տեսան Եւրոպայում Ֆրանսերէն և գերմաներէն թարգմանութեամբ Ե)։

Արարիայից մահմեդականութեան հետ տարածուեց հարեան ազգերի մէջ և նրա քաղաքակրթութիւնը։ Հին Պարսկաստանը, Հայաստանը, ինչպէս և այժմեան Թիւրքիան, Արարիայի մտաւոր զարգացման ու կուլտուրայի պարզ նշանն են կրում։

§ 6. Պարսկաստան. Պարսկաստանը հեթանոսական շրջաններում մի բանաստեղծի անուն չի տալիս։ Դժուար է կարծել, որ Կիւրոսներին, Կամբիւսներին ու Դարէհներին հերոսական գործերը իւր ժամանակին երգող ու գովարանող շունենային այդ երգ ու եղանակի բուն երկրում։ Զրադաշտական կրօնի հետ անդարձ կորել են և այդ շրջանի բանաստեղծական ստեղծագործութիւնները։ Անա Շահ-Մուհամէդի թագաւորութեան օրով ծնւում է Պարսկաստանի՝ և ամբողջ արեւելքի ամենաբանօրայտոր զիւցագնեբոլուն՝ Ֆերզուսին (1030), Պալատական բանաստեղծ, իբնէ սիրահար (աշուղ, երգ ու եղանակի ստեղծագործող) Ֆերզուսին դարձաւ զարսկական բանաստեղծութեան սիւնը։ «Շահ-Նամէն» նրան անմահացրեց, Հոմերոսի կարգը դասեց, Ռուստէմին Աքիլէսի հետ կղայրացրեց ու ցոյց տուեց հաննարաւոր հեղինակի իսկ որ Ֆերզուսի (գրախոսական) լինելը։

Մոնղոլների արշաւանքից յետոյ Արեւաց աշխարհի ասպետական—հերոսական ոգին թուլացաւ, բանաստեղծութիւնն ստացաւ միտաբ բնաւորութիւն։ Այս շրջաններում էր որ ծնունդ առան պարսկական հոշակաւոր մուղամէտներն ու տխուր, սիրտ մաշող մեղեդիները։ Դրութիւնը փոխուեց, աշխարհային վիշտ ու թախիժը երևում էր ամեն մի երգից։ Զաւալէզգին Ռուսի, Ֆերեղեզին Ատատար, Մենայի Խազրիկ, Խայիամ մի-մի Աօպարտներ էին իրենց վերին աստիճանի սիրտ մորմոքող յոռետես երգերով։ Անա մի-բանի տող Խայիամի աշուղից ազատ թարգմանութեամբ—

Աշխարհ եկար դու, տեսար ամեն բան,
Բայց ինչ որ տեսար, ինչ որ զգացիր՝
Իմացիր որ լոկ տեսիլք է միայն։
Շատ բան լսեցիր, շատ բան իմացար,
Բայց ինչ ձայն էլ դիպաւ ականջիդ՝
Դիտեցիր, ով մարդ, տեսիլք է միայն։
Տիեզերք անցար, աշխարհ չափեցիր,

* Մերոյլանդի գիտնը-հրատ. Մաք-ճիզէն. Փարիզ. 1837

Նոյնը գերմաներէն—հրատ. Քրիկկերման. Պտուզգորտ. 1843

Լորարի գիտնը. Վիեննա. 1880

Այժմ քո ամեն ես, յոգնած վաստակած,
 Բայց ինչ յիշում ես, ինչ մտարերում՝
 Բողոք-բուրբ տեսիլք է միայն,
 Թանձր ծածկոյթք աշխարհի գաղտնեաց
 Մեր հոգու աչքից ոչ ոք չը բացեց,
 Խորիստում ենք մենք, աւաղ, խուարում:
 Ինչու ամեն բան տեսիլք է միայն:
 Մարդուս ազանով բնակարանը
 Մէկ հաս է միայն.—այդ գերեզմանն է,
 Ո՛հ, մնացածը, ինչքան էլ խորենեք,
 Ինչքան մտածենք, տեսիլք է միայն *)

Թախծային սե-սե ամպերը կամաց կամաց չքացան պարսիկ բանաստեղծութեան երկնակամարից. հորիզոնից բարձրացաւ արեգակնափայլ աստղը—Հաֆիզ (1389). թէ Ծերդուսին Համերոսի հետ է կանգնում, ինչու պէտք է Հաֆիզն էլ Պինդարից յետ մընայ: Ինչ որ Ծերդուսին վիպականի՝ այն եղաւ Հաֆիզ քնարական բանաստեղծութեան մէջ: Համեարաւոր երգչի ամեն մի տողը նորից կեանք ու հոգի տուեց նուազած ու կեանքից ձեռք վերցրած պարսկին: Միրել կեանքը, վայելել նրա քաղցրութիւնները, բնութեան գեղեցկութիւնները, կինը՝ անշէջ սիրոյ յաւիտեան գգուանքի ու փաղաքշանքի արժանի այդ հրաշալի արարածը, այս էր քարոզում Հաֆիզ, այդ եղանակն էր նուազում նրա ոսկի քնարը, որքան էլ որ աշխարհի բախտի բանալին փրճարել ու զանել ուզենային Սաադու նման խոշոր իմաստասէրները:

Հաֆիզու աշակերտ ենք համարում վերջերումս ահագին հոշակ վայելող երգիչ Նիզամուն: Նիզամին անուանի քնարերգու դարձաւ զբնիով մօտ քսան հազար տող ոտանաւոր: Նիզամուն աւելի անմահացրին նրա հինգ յայտնի գործերը, որ մահից յետոյ հրատարակուեցին «փէնջ փէնջ» (հինգ զանձ) անունով, որոնք են Մախսեպուլ էսրաք, (շտեմարան գաղտնեաց), Իսկենդար նամա (աղէքսանդրեան գիրք) նկարագրում է Մակեդոնացու Պարսկաստան մտնելը, Խոզրու և Եիրին, Լէյլա և Մաջլուն, և Հաֆա պէյքեար (եօթը գեղեցկութիւն):

§ 7. Թիւրքիա. Պարսկաստանի ազգեցութիւնը երևում է Թիւրքիայի բանաստեղծութեան վրայ: Օսմանեան դինաստիայի Թաղաւորներից մէկը, Մուլիան Մուհամէդ Բ. ինքը աչքը-բանաստեղծ էր, հովանաւորում էր, խրախուսում աչքը-բանաստեղծ և ունէր իւր պալատական երգիչները: Առնասարակ Թիւրքիայի սուլթան-

*) Թարգմանութիւն մեր.

ները սիրահար են աչքըութեան, մեծ բաւականութեամբ ու ակնածութեամբ լսում են նշանաւոր աշուղների երգ ու նուագածութիւնը, պատահել են ղէպքեր, որ երեւի հայ աշուղներ էլ երգել են Օսմանեան միապետների առաջ, ինչպէս Նեաային, Բիւճին և այլն: Դեռ ժ՛ր-բզ դարում յայտնի էր Բոսփորի ակերում Ասաղը անուանով հասարակաց երգիչը, որ կարծես նենց իւր անուանով հիմնադիրը եղաւ Տանկաստանի աչքըութեան: Այնուհետև հետեւեալ դարերում Օսմանեան երկրի ամենանշանաւոր աշուղներն եղել են Ահմէտ Տայի, Սէտտի, Լամիի, Նէճաթի, Ֆազլի, Ֆուզուլի, Վերջինս նոյնպէս արքունի Գրան աշուղ էր, մեծ ուշադ և յարգանք էր վայելում բարձր շրջաններում, Հեղինակ է բազմաթիւ երգերի ու հերթաթիւերի որոնց բոլորի մէջ զլիսաւոր տեղը բռնում է սէրը: Ֆուզուլին սէրը շատ բարձր է դասում և ահա մի երգ, որով և լաւ որոշում է նա աշուղի կոչումը—

Նա է աշուղ, ով տալիս է կեանքը իւր սիրելիանին,
 Թող չը սիրէ ոչ ոքի, ով ներհակ է այս պայմանին,
 Կեանքը իւր սիրունուն տալն է շնորհքը աշուղին,
 Կեանքը չը տուողը թերի է, չէ սիրում իւր զեղանին...
 Սէր քաշելը սիրահարը թող սովորի թիթեռից,
 Լոյսը սիրելու համար զո՛ր է գնում վառարանին,
 Կեանքը սիրածին տալու համար թող մի մարդ չը
 պարծենայ
 Այդ բանը վայել է միայն Ֆուզուլու աստիճանին:*)

Տեսէք որքան էլ բանաստեղծը բարձր է դասում իւր աստիճանը, բայց և սիրունու համար կեանք տալը անհրաժեշտ է համարում իսկական աշուղ կոչուելու համար:

Պարսկական բանաստեղծութեան ազդեցութիւնը մեր աշուղների վերայ երևում է եղանակների և երգերի բնաւորութեան մէջ, մտքերի ու արածադրութեան մէջ, իսկ երգերի տեխնիքական կազմութիւնն ու աշուղական արուեստը ամբողջապէս հին, արարական ծագում ունի: Թիւրքիայի նշանաւոր աշուղներն են մեծ մասամբ մշակել ու զարգացրել աշուղական երգերի այն բազմաթիւ ձևերն ու տեսակները, որոնց մասին խօսելու ենք մեր այս գրութեան III-րդ մասում:

§. 8 Աշուղները Արեւմուտքում. Որքան էլ որ սուղ կազմ ունենայ մեր տեսութիւնը, այնուամենայնիւ անհրաժեշտ է որ դառնանք և՛ Արեւմուտք, տեսնենք թէ՛ Ներսիսի էլ ունեցել է իւր բա-

*) Թարգ. Արեւմու.

նաստեղծ-երգիչները, շրջող ու քարոզող հրաժիշտները՝ մի խօսքով աշուղները: Կը տեսնենք, որ թէ գերմանական ժողովուրդները, թէ ուսմանական ու սլաւոնական ազգերը զանազան ժամանակներում ունեցել են այդ կարգի մարդիկ՝ և որոնք այժմ վաղուց արդէն անցել գնացել են անդարձ ու մտել պատմութեան շրջանը:

Նախ յիշենք, որ զեռ ժիւրդ դարուց արդէն Հոննոսի արքայութեան ունէին գերմանական հին երգեր որ ընդհանուր անունով կոչուում էին Նիելպելունդեան երգեր (Niebelunden bied), Այդ երգերի մէջ վառ կերպով նկարագրուած է գերման ազգերի նախնական վարք ու բարքը, անուանի գործերը և ժամանակագրութեամբ զայիս հասնում է մինչև Սեզուրդ:

Ժիւրդ դարում գերմանական բանաստեղծութեան մէջ յայտնի են դասնում արքունի քնարերգու բանաստեղծները, ասպետական երգիչները, որ կոչուում էին մի նն է գի ն գ եր: Մրանցից ամենայայտնի են Հանրիխ Ֆօն-Ֆելդիկէ, Ֆրիդրիխ Ֆօն-Պուզէն, Ռէյման-Ֆերունի, Վոյլֆրամ Ֆօն-Էշենբախ, իսկ ամենազերազանցը և հանճարաւորն է Վոյլտեր Ֆօն-դեր Ֆօզելվէյտէ: Միննեղին-գերմերի մէջ ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում երգ ու բանաստեղծութեան մրցումներ թագաւորի ներկայութեամբ: Այնուհետև զբանցից առաջ են զայիս քաղաքային երգիչները՝ մէյ ստ եր գի ն գ եր-ները, որոնք շատ նման են եղել մեր աշուղներին, կազմում էին համբարական միութիւններ, ունէին իրենց որոշ կանոնները աշակերտի, փոխ-վարդետի (մեղանում խալֆա) վարպետի (ուստա) վերաբերեալ: Աշակերտները և փոխ-վարպետները տարածում էին վարպետի երգերը, մինչև որ իրենք էլ կոչուում էին մէյստեր և ունենում էին իրենց հեղինակութիւնները: Մայնց քաղաքը մէյստերգիւնդերների զլխաւոր կենտրոնավայրն էր, որտեղից նրանք տարածուում էին ամբողջ Գերմանիա ու յետոյ Աւստրիա և Զուիցերիա:

Քաղաքական փոփոխութիւններ մամուլի և դպրոցական գործի հսկայական անումը Գերմանիայում պատճառ դարձան աշուղների վերջնաւուժն: Ժէւրդ դարում մէյստերգիւնդերութիւնը վերջացաւ, բայց վերջին դպրոցը փակուեց միայն 1839 թուականին: Մէյստերգիւնդերների մասին գեղեցիկ պատկեր է տալիս Վագներ իւր «Die Meistersenger von Nurburg» երաժշտական դրամայում: Յայտնի անուն են ունեցել այդ մարդկանց մէջ Հայնրիխ Միւլլիխսկի, Մուսկատբուզ, Միխայել Բէհայտ, Հանս Ֆօլց, Ազամ Պուսան, Վերջին և ամենանշանաւոր մէյստերգիւնդերը համարուում է Հանս Սակ որ կոչկակար էր:

Բոլորովին այլ կերպարանք ունէին ժիւրդ դարերում

Հարուսային Ֆրանսիայում երևացող արուբազուրն երբ: Մը-
րանք ի բնէ ուրախ, կեանքի վայելքներով զուարճացող, սիրող
ու սիրուող տարր էին ներկայացնում: Մէյստերզինգերը իւր
երգերի մէջ երևում է գերմանացու սառնութեամբ, մայլ ու մը-
տայոյզ, թախծոտ, արուբազուրը—կրակոտ, կայտառ ու վառվը-
ռուն: Միյստերզինգերը կրօնական արամազրութիւն ունի,
արուբազուրը լիովին զո՛ւ լինելով աշխարհայնից, երկինք նայելը
համարում է միայն արեգանքի գործ: Յայանի է, որ մշտապէս
պայծառ երկնքի տակ ապրողն, աւելի նուազ ընդունակ է լինում
ճանաչել ու զգալ բնութեան գեղեցկութիւնը, քան մայլ եր-
կըրում, պարզ երկնքի կարօտ քաշողը: Տրուբադուրներն իրենց
երգերի մէջ շատ քիչ տեղ են յիշում բնութիւնը, իսկ մէյստեր-
զինգերներին երգերի կիսից շատը, նուիրած է բնութեան նկարա-
գրութեան, դարնան ուրախ՝ ու աշնանը գժնդակ կղանակին:
Տրուբադուրն իրեն չի համարում հասարակութեան զուարթարար
ու բանաստեղծութիւնը համարում է աստուածային տուրք, ոչ թէ
արուեստ: Նրա հետ թշնամանալը շատ վտանգաւոր էր—մինչև
անգամ թագուորի համար: Նա կը գնար նրա վերայ մի ան-
նպաստ երգ կը շինէր ու շուտով կը տարածէր ամբողջ քաղաքը,
խայտառակելով իւր հակառակորդին: Գեղարուեստի հայեցակէ-
տից արուբազուրի երգերը բարձր էին քան մէյստերզինգերնե-
րինը, աւելի պատկերաւոր սեռով, գեղեցիկ, երաժշտական:

Ի՞նչ տեսակ էին նայում սիրոյ վերայ Սերուպայի այդ երկու
կարգի նշանաւոր աշուղները: Մէրը արուբադուրների բանաս-
տեղծութեան էստետիկան է, ամբողջական կազմը—բայց սէր ոչ
հիմնական՝ ոչ բէլալական, այլ որպէս սոսկ կին, զգուանքի, փա-
ղաքշանքի առարկայ: Իսկ գերմանացի աշուղի սէրը ասպետական
է, թէև զաղաուկ ու ամաչկաւ: Մինչ արուբադուրը երգով իւր
սիրուհուն զիմում է արժանացնել իրեն ամենամեծ պարգևին՝ հը-
րապարակական համոյրին, մէյստերզինգերը սրբապղծութիւն է
համարում մինչև անգամ սիրոյ առարկայի անունը երգի մէջ ա-
սելը, իւր սիրուհուց մի ժպտալից ողջոյնը՝ (vriunt licher guos)
—ա՜ա միայն ինչ է ցանկանում նա, իսկ արուբադուրը՝ չէ՛ որ
Ֆրանսիացի է:

Ժամանակ առ ժամանակ արուբադուրների մէջ էլ, ինչպէս
արևելեան աշուղների միջև, տեղի էին ունենում հրապարակական
մրցումներ, վէճեր որ կուշուում էին տենսօ (tenso) ու ահագին
հետաքրքրութիւն էին շարժում ժամանակակից երգ ու կղանակ
սիրողների շրջաններում:

Տրուբադուրները, կարելի է ասել, պատկանում էին ամեն

դասակարգի, չորս հարիւրի չափ յայանի արուբազուրների համարեա կէսը ազնուականներ էին, իսկ միւս մասը հասարակ ու ստորին դասակարգից: Քսանի չափ արքայազուն արուբազուրներ կային, որոնք ոչ միայն ստոր պարապմունք չէին համարում այդ, այլ և պարծնում էին դրանով: Ուրախութեան ու բաւականութեան մէջ անցկացնելով իրենց կեանքը՝ նրանք ծերութեան հասակում մեծ մասամբ քաշուած էին վանք: Ամենանշանաւոր արուբազուրներից յիշենք Սաւորիկ, Էլիաս, Փովրի Ուտէլ:

Տրուբազուրներին հետեւեցին անշուշտ Զրանսխայում յայտնուող ար ու վ ո ր ները և Հունգարիայում ար ու ս ա ա ո ր ները: Սրանք երգում էին իրենց իշխանների ու հերոսների սըխրագործութիւնները անական հանդէսներում ու պատերազմի ժամանակներում: Թէ այս կարգի երգիչները, թէ Իտալիայում յայտնուող արուբազուրները նուազ կեանք և գործունէութիւն ունենալով իրենց պատմութեան մէջ մի առանձնակի անուն չը թողնին:

Մէլստերգինգերներից և արուբազուրներից ոչ պակաս հետաքրքրութեան արժանի են բարդերը: Սրանք սկանդինաւիական ծագում ունեն, բայց գործունէութեան վայրը Կելտացուցի և Դալլերի մէջ էր, որտեղից յետոյ անցան այլ երկիրներ: Բարդերը, կարելի է տեսի, կիսով չափ մոգեր էին ու նման հրէական մարգարէներին: Մխիթարում, խրախուսում, ոգևորում էին թոյլերին, ընկածներին, փառարանում էին աստուածներին՝ և նշանաւոր հերոսների գովքն անում: Պատերազմի ժամանակ զորքերի առաջ ընկած գնում էին թշնամու դէմ ու նակատամարտի միջոցին Ղևնոզ երէցի պէս հոգի ու սիրտ էին աշխս վհատողներին ու յուսահատողներին: Բարդը յարգում և մեծարում էր մոգերին, մարգարէներին հաւասար, որովհետև համարում էր Աստուածութեան հետ անմիջական կապ ունեցող: Նրանք շատ անգամ թագաւորների, իշխանների և այլ մեծատուն քաղաքացիների մինչև զետակների, հաշտարար միջնորդի և խորհրդատուի դեր էին կատարում: Բարդերը ժառանգարար պահպանում էին իրենց կոչումը—որ նշանաւոր է—և ցեղարար վայելում էին նոյն համակրանքն ու ազդեցիկ հեղինակութիւնը: Պատանի բարդը պէտք է տաններկու տարի ծառայէր՝ որ իբրւումը ունենար խկական բարդ կոչուելու: Այստեղ էլ որոշեալ ժամանակներում տեղի են ունենում աշուղական մրցումները—էլստեաֆերգիները, որոնց պարզեաորոզ դասաւորը կարգում էր թագաւորից: Գլխաւոր բարդը հազնում էր երկնագոյն հանդերձ և այնպիսի մեծ պատկառանք ունէր, որ նրա ներկայութեամբ ոչ ոքի իբրւումը չէր տրուած

սուրը մերկացնել: Բարդերի զլխաւոր կենտրոնատեղին էր Գալլիան, որտեղից յետոյ ցրուեցին Իւլանդիա, Շոտլանդիա, և հայրենիք՝ Սկանդինաւիայի արեւմտեան ափերը:

Երբեմն բարդերը օգտուելով իրենց մեծ նեղինակութիւնից, արտօնութիւններէից ի շարն էին գործ դնում այդ. նրանցից մի քանիսը մեծ հարստութիւն ձեռք բերին, հոգեր ու կալուածքներ առան և իրենց շահասիրութեամբ դարձան ժողովրդի ատելութեան և հակակրօնքի առարկայ: Դրա հակառակ նրանցից շատերը անշահասէր ու դեմօկրատ մարդիկ են եղել, ժողովրդասէր և ազգասէր համայնք կազմակերպելով: Իւլանդիայում բարդերի երգերն ու պատմական հէքիաքները նպաստում էին Իւլանդացւոց դէպի հայրենիքն ունեցած սիրոյ պահպանման, նոյն իսկ այդ հանդամանքն պատեաւ դարձաւ: Անգլիական կառավարութեան նրանց վերայ խէթ աչքով նայելու, ինչպէս Հենրիկոս 2-րդի և Է-րդի ժամանակներում: Եղիսաբէթ Թագուհին մինչև անգամ հըրամայնց կախել այն բարդերին, որոնց կը յաջողուէր բռնել. նըրանց երգերը զրգոնցուցիչ և ազմարար սուամբեր էին ժողովրդի ապստամբութեան: Բոյլի արիւնասեղ ճակատամարտը վերջնականապէս արմատախիլ արեց բարդերի գոյութիւնը: Վերջին իւլանդական բարդն համարւում է Տուրլոուն (1738), Նոյն վիճակն ունեցան նրանք Շոտլանդիայում և Գալեդոնիայում, որ տեւեցին մինչև 1746 թուականը: Վերջերումս իւլանդացի հայրենասէր զրազէտները սկսեցին հրատարակել բարդերի երգերը և այժմ փորձեր են անում նորից առաջ լրերել բարդութիւնը և նուազել նրանց էյստեմֆերդները:

Անգլիան էլ բարդերի գիմաց ունէր իւր հասարակական երգիչները: Անգլո-սակսերն իրենց գերմանական հայրենիքից բերին Թեմզայի ափերը իրենց աշուղներին՝ սկօպներին: Բացի սրանցից, ինչպէս Իւլանդիայում, այնպէս էլ Անգլիայում հաստատուել էին կելտական ֆիլերերը, որոնք բարդերից ոչ պակաս զիրք ու համարում ունէին քաղաքացիների աչքում: Սրանք աւելի ժողովրդականութիւն ձեռք բերին, որովհետև գուշակութիւններ էին անում, միջնորդ դատաւորներ կարգւում, որև աւելի ժողովրդին սիրելի է, հէքիաքներ, առասպելներ ու աւանդութիւններ էին պատմում: Զմեռուայ երկար գիշերներին, Թագաւոր և իշխան, բազմաթիւ ժողովուրդ, փայտեայ ապարանքներում, մաղաների (ֆակել) լուսաւորութեան տակ լսում էին ֆիլերի հեքիաքներն ու նուազածութիւնը: Ենրանք և՛ Թարոն էին և՛ լըրազեր և՛ հանդէս, ասում է մի զրազէտ: Ֆիլերը շատ մեծամիտ էին, բարձրից էին նայում բարդերի վերայ, նրանց համարում

էին ստոր արարածներ. օրինակ մի Ֆիլիթուելով իւր ժամանակում տեղի ունեցող անյաշող հանդամանքները, ասում է—«...այսպէս գնալով-գնալով վերջը կը համնի այնպիսի գրութիւն՝ որ կը դառնանք մի հասարակ բարգ...»^{*)}

Այսպէս ուրեմն՝ մեր յիշած երգիչներէց միննեղինգեր, մէյսաերգիներ, տրուբատուր, բարտ, Ֆիլ համարում են եւրոպական նշանաւոր, առաջնակարգ աշուղները: Եղել են և երկրորդական, նուազ նշանաւոր աշուղներ, ինչպէս Սկանդինաւիայի հին սկապեն-ները, սկոյլդ-ները, սլաւոն ազգերի բայկան-ները, գուսլի բար-ները, բանդուրիստ-ները, կօրգար-ները Բալկանեան ազգերը, Մալաոսիան, Լեհաստանը որքան որ հարուստ են ժողովրդական—ասմկական երգերով, խաղ ու պարերով, այնքան էլ ազգատ են աշուղական երգերով: Ռուսիան յայտնի է իւր անուանի վիպասան—դիցազնական բիլիմաներով ու ասղերով, որոնց մէջ մեծ մասամբ նկարագրում է Վլադիմիրի օրերում—ուրեմն՝ ուսուաց բրիտաննէութեան սկզբներում—ազրոզ առասպելական-հակաների՝ բազադիւրների քաջագործութիւնները: Սակայն այդ երգերը իրենց կազմով ու բնատրութեամբ անլիք զուտ ժողովրդական են քան աշուղական, մանաւանդ որ նրանց մէջ մի հեղինակի անուն էլ չի յիշում: Դեռ մինչև այժմ էլ Ռուսիայի հետաւոր նահանգներում (Արխանգելսկ, Սիբիրիսկ) երգում են այդ պատմական երգերը ու ժողովրդի մէջ վառ են պահւում հերոսական ժամանակների յիշատակը:

Առաջնակարգ, երկրորդ կարգի աշուղների մասին խօսելուց յետոյ չի կարելի բաց թողնել երրորդ կարգի աշուղներին, որ գոյութիւն ունէին Եւրոպայում: Այդ կարգում մենք դասում ենք թափառական ու փողոցային, ստոր դասակարգի երաժիշտ-երգիչներին, որ շատ դէպքերում իրենք ոչ մի հեղինակութիւն չունենալով, երգում ու տարածում էին յայտնի աշուղների երգերը: Այդ դասակարգի աշուղները, որ երբեմն կիսամերկ ցնցոտիների մէջ, մուրացիկ շրջում էին փողոցները, Ֆրանսիայում կոչւում էին տուլեբուսիս և բուսիս: Շատ անգամ մէյսաերգիչներն էր փող էին տալիս նրանց՝ որ իրենց երգերը տարածեն Ֆրանսիայում, կամ տրուբադուրները իրենց հետ ման էին ածում որպէս ծառայ: Ռուսիայում միջին դարերում նոյնպէս թափառում էին ուխտաւոր-երգիչներ որ կոչւում էին կալիկ-ներ: Երբ ամբոխին զուարճացնելու համար Ֆրանսիայում այդ կարգի մարդիկ սկսեցին երգելու ժամանակ իրենք էլ թոչկոտել, ծամածոթութիւններ

*) Корнц. Ист. Лит. II

անել կամ ճարպիկութեամբ զանազան առարկաներ խաղացնել ձեռքերի մէջ, կոշուեցին ժօն գլխերներ: Սրանք մեծ մասամբ ածուած էին ցիմազալ: Այս մարդիկ խեղճ, կորած մարդիկ էին, ընդհակառակը խմբերով յանդգնաբար արշաւում էին այն վայրերը, որտեղ տեսնուած էին որ կարելի է գործ շինել: Խուժում ու լցում էին այն երկիրները, որտեղի ժողովուրդը խառնակ դժբութեան մէջ էր գտնուում: Օրինակ՝ երբ Նորմանները տիրեցին Իրիտանիային ու Ֆրանսերէն լեզուն այնտեղ մեծ գործունէութիւն գտաւ, իսկոյն ներս լցուեցին արուվերներ ու ժոնգլերները: (Հայ ժոնգլերների մասին խօսք ունինք մեր տեսութեան IV-րդ մասում):

Բ. ՀԱՅՈՑ ՍԷՂ

§ 9. Հին Շրջան.—Փոքր իշխան ժանթանալով օտար ազգերի ունեցած վիպական ու քնարական երգիչ բանաստեղծների, աշուղների հետ, այժմ համեմատական հայեացքով դառնանք դէպի մեր ազգը՝ որ մեր բուն նիւթն է կազմում ու տեսնենք թէ Հայոց մէջ էլ հին ժամանակներում եղե՞լ են երգ ու երգիչներ և թի՞նչ են տուել մեզ:

Մի որևէ պատմական-քննական տեսութիւն կազմողը երկու դէպքում դժուարութեան է հանդիպում՝ մէկ—եթէ իւր վերջրած նիւթի մասին իրատ շատ են աղբիւրները, մէկ էլ՝ եթէ բոլորովին չը կան, կամ եղածն էլ աննշան են ու պակասաւոր: Վերջին դրութեան մէջ էր գիտական-հայագէտ հանգուցեալ Մկրտիչ Էմին 1850 թուականին իւր «Ղէպը հնոյն Հայաստանի» տեսութիւնը կազմելիս: Սո՞ժոյ իտալերէն, Նեյման՝ գերմաներէն, Ս. Նազարեան ռուսերէն լեզուներով դրանից առաջ արդէն մի-մի աշխատութիւն հրատարակել էին հայոց գրականութեան վերտրեքեալ, բայց այդ երեքն էլ գիտական-քննական մի այնպիսի արժէք չունենալով, էմինին իրաւունք էին տալիս ասելու իւր յառաջարկում թէ «առ մեզ չիք պատմութիւն գրականութեան: Զօր ինչ հայ և օտարազգի հեղինակք մինչև ցայսօր ժամանակի գրեցին ըստ այսմ մասին, լո՛կ տեղեկութիւնք են վասն մատենագրաց և գործոց նոցին և այն թերի բազմօք: Մի լուրջ աշխատութիւն չը տեսնելով, ուրեմն օտարազգի պատմագէտ-ուսումնականները իրաւունք ունէին կասկածելու և ասելու՝ որ հայերը հին ժամանակներում բոլորովին զուրկ են եղել բանաստեղծութիւնից: Այդ համոզմունքը տիրում էր՝ մինչև էմինի յիշեալ ուսումնասիրու-